ԶԵՅԹՈՒՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

(1862 թ. զինված ապստամբության 100-ամյակի առթիվ)

Վ. Գ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Անցյալ դարի առաջին կեսում եվրոպական Թուրքիայում տեղի ունեցած սլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, Հունաստանի և Սերբիայի ազատագրումը Թուրքական լծից խիստ անհանգստացրել էին Օսմանյան կառավարությանը։ Նա կտրուկ միջոցների էր գիմում կանխելու համար մյուս ժողովուրդների ազատագրական շարժումները։ Սուլթանական բռնապետության հարվածներից մեկն ուղղվեց Զեյթունի վրա, որը դեռևս պահպանում էր իր կիսանկախ վիճակը։

Խուրշիդ փաշան, 12 հազարանոց կանոնավոր զորախմբով, 1860 թ. հունիսին բանակ դրեց Ջահան գետի հովտում (Զեյթունից մոտ 20 կմ հեռու)։ Սպառնալով գրոհել Զեյթունի վրա, Խուրշիդ փաշան պահանջեց վճարել անցած տարիների հարկը և հայտնել իրենց հպատակությունը սուլթանական իշխանություններին։ Մինչ Խուրշիդ փաշան շարունակում էր սպառնալ, զեյթունցիները հանկարծակիի բերին հակառակորդին, անցան Ջահան գետը՝ սրընթաց գրոհով հարձակվելով թշնամու վրա։ Թուրքական զորախումբը գլխովին պարտություն կրեց։ Փաշան իր զորախմբի մնացորդներով ապաստան գտավ Մարաշում։

1862 թ. Մարաշի կուսակալ նշանակվեց երիտասարդ զինվորական Ազիզ փաշան։ Բարձրագույն Դռան հրամանով Մարաշում կենտրոնացվեցին թուրքական կանոնավոր զորքի նոր միավորումներ և հրետանի։ Կուսակալին տրվեցին արտակարգ լիազորություններ՝ մոբիլիզացնել լեռնային Կիլիկիայի ավարառու ցեղերը և պատրաստվել արշավելու Զեյթունի վրա։ Շեյխերը, մոլլաները և դերվիշները շրջում էին քաղաքներն ու գյուղերը և կրոնական մոլեռանդ ֆանատիզմ բորբոքում ընդդեմ հայ բնակչության։ Կուսակալը եռանդուն կերպով նախապատրաստվում էր պատերազմի, երբ նրա գործակալները 1862 թ. հունիսին Զեյթունի գավառակի Քեթման գյուղում հրահրեցին ազգամիջյան ընդհարումներ. առիթը ստեղծված էր, որպեսզի անմիջապես գավառակը գրոհի ենթարկվեր։

Ալաբաշ և Թոփալ-օղլի գյուղերի հայ գյուղացիությունը կատաղի դիմադրություն ցույց տվեց և գավառակից դուրս շպրտեց Ազիզ փաշայի առաջապահ զորաջոկատները։ Հուլիսի վերջերին թուրքական կանոնավոր բանակը, բաշիբոզուկների խմբերի հետ միասին ընդհանուր հարձակման անցավ։ Գավառակի գյուղացիությունը հերոսական դիմադրություն ցույց տվեց, սակայն անհնար էր արգելք հանդիսանալ հրոսակախմբերի գրոհներին։ Թուրքական հորդաները դաժանորեն ճնշեցին հայերի դիմադրությունը, ավերեցին ճանապարհին ընկած բազմաթիվ բնակավայրեր։

Ծերենցը, որը 1860-ական թթ. շրջագայել էր Կիլիկիայում, թշնամու վայրագությունների մասին հետագայում գրել է. «Արք և կանայք և տղայք բոլոր սուրի բերան գնացին, տունները կողոպտեցան և ամբողջ գյուղեր հրո ճարակ եղավ։ Արյունը փողոցներու մեջ կը վազեր և հրդեհի մուխը սոսկում ու սարսափ կը ծավալեր մերձակա գյուղերը։ Փաշան հրամայեց գյուղին մոտակա հայ վանքին դռները խորտակել, և այդ արյան ծարավի մարդիկը կուսակալին աչաց առջևը և նորա հրամանով վանահայրը և միաբանքը հոշոտեցին»[1]։

Թշնամու մահ ու ավերածություն տարածող հորդաները շարունակում էին առաջխաղացումը, նրանք ընդհուպ մոտեցել էին Զեյթուն քաղաքին։ Զեյթունցիները, երկյուղ կրելով թշնամու աննկուն ուժերից, կողմնակից էին վճարել նախկին տարիներին չվճարված հարկի մի մասը, միայն այն պայմանով, որ Ազիզ փաշան ետ քաշի իր բանակը գավառակի սահմաններից։ Սակայն այդ բանակցություններն ապարդյուն անցան։

---

1 «Փորձ», 1879, № 11, էջ 23։

Զեյթունցիները, կորցնելով թուրքական կառավարությունից հաշտություն ստանալու հույսը, վճռեցին հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանել և թույլ չտալ թշնամու հորդաներին ներխուժել քաղաք։ Դիտակցելով ահեղ վտանգի ամբողջ լրջությունը, զինվեցին բոլորը՝ 12—60 տարեկան տղամարդիկ ու կանայք[2]։ Զեյթունցիներին միացել էր դավառակի հայ գյուղերից փախած բնակչությունը։ Շուրջ յոթ հազար մարդուց բաղկացած զորախումբը բաժանվեց մի քանի գնդերի, որոնց գլուխ կանգնեցին ռազմական գործին հմուտ մարդիկ։

1862 թ. հուլիսի վերջին օրերին քաղաքը շրջապատված էր բոլոր կողմերից։ Զեյթունի համայնքը, հաշվի առնելով թշնամու գերազանց ուժերը, որոշեց ակտիվ պաշտպանությամբ հյուծել թշնամու ուժերը և ապա անցնել ընդհանուր հարձակման։ Ազիզ փաշան, ոգևորված իր նախնական հաջողություններով, կարծում էր, թե մի հարվածով կարելի է կոտրել հայ լեռնականների դիմադրությունը և հաշվեհարդար տեսնել նրանց հետ։

Մարտերն սկսվեցին առանձին ուժգնությամբ, կռիվներ էին գնում Գարկլար կիրճի ուղղությամբ։ Տակտիկական նկատառումներով զեյթունցիները մարտերով նահանջեցին դեպի քաղաք։ Թշնամու մի մեծ զորախումբ ներս քաշելով «Կոտորածի կիրճի» խորքը, այդտեղ նրան ծուղակը գցելու և հարվածելու համար։ Միաժամանակ ամուր պաշտպանեցին կիրճի մատույցները, թույլ չտալով հակառակորդին այդտեղից ներխուժել քաղաք։ Հայկական ջոկատներն ամուր դիրքեր գրավեցին նաև քաղաքի հյուսիս-արևելքում։

Թշնամու բանակից երկու գնդեր դիրքեր էին գրավել Էրիշեի լեռնահովտում և պատրաստվում էին օգոստոսի 1-ին. գիշերով, դրոհել քաղաքի մատույցների վրա։ Սակայն հակառակորդի բանակում կատարվող տեղաշարժերը չէին վրիպում հայ հետախույզների տեսադաշտից։ Հետախույզ ջոկատները քայլ առ քայլ հետևում էին թշնամու գնդերի առաջխաղացմանը։ Նախքան նրանց գրոհը հայ մարտիկները հանկարծակի ու սրընթաց հարձակվեցին թուրքական այդ գնդերի վրա։ Հակառակորդը դիմեց անկանոն փախուստի։ Զեյթունցիները հետապնդեցին նրան և դուրս քշեցին քաղաքի մատույցներից։ Այս մարտում հայ լեռնականները ոչնչացրին մոտ հազար մարդ, գրավեցին մեծ քանակությամբ ռազմավար։ Թուրքական այդ գնդերի պարտությունը նշանակալից ազդեցություն ունեցավ թշնամու բանակի բարոյալքման վրա։

Ազիզ փաշայի բանակի մի մասը, որն ամրացել էր Բերկին-Կալի և Աքդաղի լեռնահանգույցներում, հրետանային կրակի տակ վերցրեց քաղաքը։ Թուրքական զորամասը գրոհի անցավ Սաղրի ճանապարհով, ամեն կերպ փորձելով ճնշել հայերի դիմադրությունը։ Զեյթունի հերոսները ամուր պատնեշի նման պաշտպանում էին քաղաքը և ետ մղում թշնամու բոլոր գրոհները։

Օգոստոսի 2-ին կռիվները բորբոքվում են Աստվածածնա վանքի շրջանում, որը կարևոր նշանակություն ուներ քաղաքի պաշտպանության համար։ Այդտեղ կռվում էր ծերունի Գրիգոր Մարտիրոսյանի՝ երիտասարդներից կազմված ջոկատը, որը թշնամուն մեծ կորուստ էր պատճառում։ Պաշտպանական այդ մարտերում Ազիզ փաշայի բանակը արյունաքամ էր լինում, նրա կրած կորուստները բարոյալքեցին զորանց այն էլ անկազմակերպ գնդերի շարքերը[3]։

Թշնամու մի հեծյալ ջոկատ մարտեր էր մղում քաղաքի արևելյան մասում։ Զեյթունցիները գրոհեցին նրա վրա։ Թշնամու այդ ջոկատը նույնպես բռնեց փախուստի ճանապարհը։ Զեյթունցիները հնարավորություն ստացան իրենց հիմնական ուժերի մի զգալի մասը կենտրոնացնել և ուղղել «Կոտորածի կիրճում» արդեն ծուղակն ընկած Ջամուշ-օղլու զորախմբի վրա։ Ջամուշ-օղլու զորաջոկատը հնարավորություն չուներ նահանջելու կամ փախուստի դիմելու, այն ղրլխովին ջախջախվեց։ Թուրքական բանակի գլխավոր հրամանատար Ազիզ փաշան, տեսնելով, որ այլևս ի վիճակի չէ պարտության մատնելու հայ լեռնականներին և գրավելու քաղաքը, գերադասեց նահանջել։ Զեյթունցիներն արագ զորաշարժով կտրեցին թշնամու նահանջի ճանապարհը և մեծ կորուստներ պատճառեցին նրան։ «...Հայերը, տեսնելով, որ փաշայի զորքը մաս-մաս բաժանվեցավ, հանկարծ դուրս եկան իրենց ժայռերից ու այնպիսի զորությամբ և քաջությամբ հարձակվեցան, նոքա շվարած չկարողանալով դեմ դնել, սկսան անկարգությամբ փախչել։ Փաշան տեսնելով, որ իր զորքը փախչում է, ինքն էլ ստիպվեցավ նորա օրինակին հետևելու իր սպաների հետ միասին։ Հայերը հալածում էին փաշայի զորքը մինչև իրկուն ու քշեցին նրանց մինչև իրենց սահմանը։ Փաշայի բոլոր... թնդանոթները, դրոշակները ու շատ էլ զենք ընկան հայերի

2 «Կոռունկ Հայոց աշխարհին», 1363, № Ը, էջ 11 և հաջ.

3 Նույն տեղում, էջ 213 և հաջ.

ձեռքը»[4]։ Այս հերոսամարտի մասին կա մի այլ ուշագրավ տեղեկություն. «Զեյթունի գանգակից հնչումը բոլոր հայոց ի գեն դիմելու նշաններ տված էր։ Կռիվը սաստիկ կատաղի եղավ։ Հայերս ամուր տեղեր բռնած լալով են այլազգիներուն ադեկ ջարդ մը տվին... Այսպես այլազգաց կորուստը վեց կամ յոթ հազարի չափ կհասնի... 18 պեյ և գնդերու գլխավորները պատերազմի մեջ ընկած էին, հետեյալ օրը, օգոստոսի 3-ին, զեյթունցիք այլազգաց դիականքը փոսերուն մեջ նետելու գրազված էին»։

Այսպիսով, 1862 թ. հուլիս-օգոստոս ամիսներին տեղի ունեցած կռիվներում Տավրոսի ցյուղացիությունը փայլուն հաղթանակ տարավ օսմանյան բռնակալության դեմ։ Այս հերոսամարտից հետո ապստամբական ելույթներ և հուզումներ տեղի ունեցան Վանում, Մուշում, Զարսանջակում, Մարաշում, Հաճբնում և այլուր։

Ապստամբ զեյթունցիների հաղթանակը լուրջ երկյուղ պատճառեց թուրքական կառավարություններ. շարժումը կարող էր համակել հայկական նահանգները և Կիլիկիան։ Շտապ կարգով Հալեպից Մարաշ կենտրոնացվեցին կառավարական կանոնավոր մի քանի գնդեր։ Բ. Դոան հրամանով Մարաշի կուսակալ նշանակվեց Աշիր փաշան, մի բռնակալ, որն աչքի էր ընկել սլավոն ժողովուրդների ապստամբական ելույթները դաժանորեն ճնշելու գործում։

1862 թ. ապստամբությունից հետո Զեյթունը երկար ժամանակ շարունակում էր պաշարման մեջ մնալ. կտրված էր դրսի աշխարհից, բնակչությունը կանգնած էր սովի սպառնալիքի առջև։ Զեյթունի վերնախավը և պոլսահայ բարձր հոգևորականության ներկայացուցիչները դիմեցին թուրքական կառավարությանը խաղաղ բանակցություններ սկսելու համար։ Նրանք միաժամանակ դիմումներ արին ֆրանսիական կառավարությանը, որպեսզի նա միջամտի գործին։ Նապոլեոն III-ը, որը այդ տարիներին աշխատում էր գանազան առիթներ օգտագործելով ուժեղացնել իր ազդեցությունը Թուրքիայում և Մերձավոր Արևելքում, Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանի միջոցով ճնշում գործադրեց սուլթան Արդուլ Ազիզի վրա՝ զեյթունցիների հետ բանակցություններ սկսելու և հարցը «հաշտությամբ» լուծելու համար։ Սկսված բանակցությունները վերջացան նրանով, որ թուրքական կառավարությունը պարտավորվեց հրաժարվել Զեյթունի դեմ նոր արշավանք կազմակերպելուց, իսկ հայ լեռնականները հարկադրվեցին ճանաչել սուլթանական կառավարության գերիշխանությունը և ընդունել Բ. Դոան կողմից նշանակված Զեյթունի գայմագամին։

* * *

Զեյթունի ապստամբության օրերին ապստամբական ելույթներ ու փողոցային ցույցեր տեղի ունեցան Վանում, Մուշում, Կ. Պոլսում և այլ վայրերում։ 1862 թ. օգոստոսի 1-ին Կ. Պոլսի հայերը ցույց կազմակերպեցին. ավելի քան երկու հազար ցուցարարներ փողոց դուրս եկան և պահանջեցին կառավարությունից՝ դործադրության մեջ դնել «Ազգային սահմանադրությունը», և վերջ տալ հայերի հալածանքներին լեռնային Կիլիկիայում։ Թուրքական իշխանությունները կտրուկ միջոցների դիմեցին և ճնշեցին ցույցը Կ. Պոլսում։

Մի քանի օրից հետո Թուրքիայի մայրաքաղաքում սկսեցին լուրեր տարածվել Ազիզ փաշայի բազմահազարանոց բանակի պարտության և զեյթունցիների փայլուն հաղթանակի մասին։ Մայրաքաղաքում հայ արհեստավորների, հազարավոր պանդուխտների, հատկապես հայ երիտասարդության ոգևորությունը մեծ չափերի հասավ։ Ժամանակակիցներից Սրբուհի Երիցյանն այդ օրերի իր տպավորությունը հետևյալ կերպ է արտահայտում. «Զնայելով այն ժամանակվա մատաղ հասակիս, ես նույն միջոցներում մեծ եռանդով աշխատում էի տեղեկանալ ազգիս ժամանակակից անցքերին։ Զեյթունն իր ազատ օդով, իր անվերջանալի ժայռերով, իր քաջ բնակիչներով, իմ սիրած առարկան էր»։ Կ. Պոլսի հայ աշխատավորությունը ջերմորեն ընդունեց Տավրոսի դեպքերը։ «Զեյթունը հայ ժողովրդի ոգևորության ու ազգային հպարտության խորհրդանշանն էր այդ օրերին,—ավելացնում է Ս. Երիցյանը,—այն տարին Զեյթունի անցքերը մեծ ազդեցություն ունեցան Պոլսո և այլ տեղերի հայոց վրա, ամենայն ոք Կիլիկիան ուներ ի բերան, ամենայն ոք մասնակից էր դրամական հանգանակությանց... Նույնիսկ հոմեադավան հայ երիտասարդները մոռացել էին դեպի իրենց լուսավորչական եղբայրներն ունեցած ատելությունը, և ամենայն

---

4 «Մեղու Հայաստանի», 1863, ապրիլի 20, էջ 108 և հտ։

5 «Կոռնկ Հայոց աշխարհին», 1863, N 3, էջ 180 և հտ.։ Կարելի է ենթադրել, որ այս հոդվածի հեղինակը Սրբուհի Երիցյանն է, որը հետագա տարիներին «Փորձում» հիշողություններ է տպագրել Զեյթունի անցքերի մասին։

սիրով թե՛ նյութապես և թե՛ բարոյապես օգնում էին այդ ձեռնարկություններին... Վերջապես մեծ համակրություն կար ամենայն կողմանե դեպի հայությունը»6։

Զեյթունի 1862 թ. դեպքերը բուռն արձագանք գտան ժամանակի մամուլում։ «Մեղու», «Մաչիկ», «Կռունկ Հայոց աշխարհին» և այլ թերթեր կոչ էին անում օգնություն ցույց տալ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առաջին դրոշակակիր, հերոս դեյթունցիների ապստամբությունը հաղթական վախճանի հասցնելու համար։

Թե որքան մեծ էր այդ շարժման նշանակությունը և ազդեցությունը հայ դեմոկրատական մտավորականության վրա, այդ երևում է Ռ. Պատկանյանի եռանդուն պրոպագանդայից՝ ընդդեմ սուլթանիզմի ու խանական Պարսկաստանի։ Պատկանյանն առաջ էր քաշում այն միտքը, թե Պարսկաստանի ճնշված ու ընչազուրկ հայ գյուղացին պետք է դաղթի Տավրոսյան լեռները և միանա տեղի հայ լեռնականների հետ, ուժեղացնելով հայկական ուժը և՛ տնտեսապես, և ռազմականապես, որով պիտի հնարավոր լիներ ձեռք բերել ազգային-քաղաքական անկախություն[7]։

Լեռնային Կիլիկիայի դեպքերը զգալի ազդեցություն ունեցան նաև իր ժամանակի հայ ուսանողության վրա։ Ապստամբության հետևանքով ուսանողության մի մասը սկսեց հետաքրքրվել Արևմտյան Հայաստանի հարցով, արևմտահայերի ազատագրության խնդրով։

Զեյթունի շարժման ժամանակ ուակցիոն դիրք բռնեց կղերա-ամիրայական խավը, որը, կապված լինելով թուրքական կառավարող շրջանների հետ, դեմ էր որևէ քաղաքական-ազատագրական շարժման։ Ժողովրդի հետ կապված պրոգրեսիվ դեմոկրատական ինտելիգենցիան, ընդհակառակը, ողջունեց այդ շարժումը։ Մ. Պեշիկթաշլյանը Զեյթունի հերոսամարտին նվիրեց իր հայտնի բանաստեղծությունները, իսկ Մ. Նալբանդյանը աշխատում էր այդ շարժման հետ կապել ազատագրական-քաղաքական ծրագրեր։

* * *

Ինչպես ապստամբության նախօրեին, այնպես էլ հետո Ֆրանսիան հատկապես ակտիվորեն միջամտում էր Տավրոսի հայ գյուղացիության ներքին գործերին և բոլոր միջոցներով փորձում հայ լեռնականների շարժումները ծառայեցնել իր էքսպանսիոն նպատակներին Մերձավոր Արևելքում։

Ֆրանսիական կաթոլիկ միսիոներները լայն պրոպագանդա էին ծավալել Տավրոսի հայության մեջ, աշխատելով իրենց կողմը գրավել նրան։ Թերևս այդ նպատակն էր հետապնդում նաև ֆրանսիացի գիտնական հայագետ Վիկտոր Լանգլուայի կատարած ճանապարհորդությունը դեպի Կիլիկիա։ Նա առաջ էր քաշում այն միտքը, թե Լիբանանի մարոնիտների և Տավրոսի հայերի ռազմական ունակությունները կարելի է ի սպաս դնել Ֆրանսիայի արևելյան էքսպանսիային։ Վ. Լանգլուան գրում էր. «Այս հայ լեռնականները (դեյթունցիները—Վ. Ս.) ընդհանրապես բարձրահասակ, քաջ և կորովի են։ Մի քանի տարի առաջ նրանք Պոլիս էին ուղարկել մի պատգամավորություն՝ իրենց և Բ. Դռան միջև առկախ մնացած մի հարց լուծելու համար։ Իմ բարեկամներից մեկը, որ առիթ էր ունեցել տեսնելու այս լեռնական պատգամավորության անդամներին, ինձ ասում էր, որ հազար գեյբուեզի կարող է Դարամանիան տակնուվրա անել ու գրավել, եթե այդպիսի մի արշավի մտադրված լիներ։ Ես հավատում եմ այդ հավաստիացմանը։ Իրերի ներկա վիճակում բոլոր բույլ տրվի մեզ բաղձալ Տավրոսյան հայերի լիակատար անկախությանը։ Նրանք մարոնիտների հետ Արևելքի ֆրանսիացիներն են»8։

1862 թ. ապստամբությունից հետո ֆրանսիական գործակալություն հանդիսացող կաթոլիկ կղերականությունը նոր եռանդով վերսկսեց իր գործունեությունը Զեյթունում։ Գործի էր անցել Կ. Պոլսի հայ կաթոլիկ եկեղեցու պատրիարք Անտոն Հասունյանը։ Նա ամեն ջանք գործ էր դնում համոզելու դեյթունցիներին՝ պաշտոնապես ընդունելու կաթոլիկությունը։ Ֆրանսիական օրիենտացիայի այդ երդվյալ պաշտպանը գտնում էր, որ կաթոլիկ եկեղեցուց դուրս նրանց համար

---

6 «Փորձ», 1887, № 4, էջ 193։

7 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 99։

8 Victor Langlois, Voyage dans la Cilicie et dans les montagnes du Taurus, Execute pendant les annes 1852 -1853, Paris, 1861, էջ 130 (ընդգծումն իմն է—Վ. Մ.)։

պաշտպանություն չկա։ Նրան հաջողվեց կրոնափոխ անել Կիլիկիայի հայ բնակչության մի մասին։

Անգլիական կառավարությունը բացարձակ թշնամական դիրք բռնեց Զեյթունի հայերի նկատմամբ։ 1862 թ. ապստամբությունից հետո Զեյթունի պատգամավորները մի շարք դիմումներ արին եվրոպական կառավարությունների դեսպաններին Կ. Պոլսում, որոնց թվում և անգլիական դեսպան Հենրի Պուլիվերին։ Խիստ բնորոշ է դեսպանի թշնամական վերաբերմունքը դեպի ապստամբ զեյթունցիները։ Մերենցը գրում է. «Զեյթունցվոց... աղերսագիրը իրես (անգլիական դեսպանին—Վ. Մ.) մատուցողը շատ դաժան և արհամարհոտ կերպ ընդուներ էր և աչք մը ձգելեն վերջը բսեր էր զայրագին. «Բայց դուք պետք է գիտնաք, թե այդ ձեր անզգամ զեյթունցիք, այդ ավազակները, շատ վատ գործողություն բրեր են, և Աղիզ փաշային խորտակեր ու փախուցեր են. ինչպես կհամարձակիք հիմա իրենց կողմեն ինձ աղերսագիր բերել»[9]։ Կոստանդնուպոլսում լույս տեսնող անգլիական «Լևանթ Հերալդ» թերթը ապստամբության օրերին կամպանիա սկսեց զեյթունցիների դեմ՝ զանազան զրպարտանքներ հերյուրելով նրանց հասցեին։ Անգլիական դաղութարարները օժանդակում էին Թուրքիային և խիստ թշնամական դիրք գրավում փոքր ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման նկատմամբ։ Սուլթանական բռնապետությունը արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումները ճնշում էր արևմտյան պետությունների օգնությամբ։ Այդ որոշակիորեն դրսևորվեց Զեյթունի ինչպես 1862 թ., այնպես էլ հետագա ապստամբությունների ընթացքում։

Մեծ է Զեյթունի հերոսամարտի պատմական նշանակությունը։ Այն բուռն արձագանք գտավ հայ ժողովրդի մեջ և իր խոր կնիքը դրեց նրա քաղաքական կյանքի վրա։ Զեյթունցիները փառավոր էջեր դրեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ։

ЗЕЙТУНСКАЯ ЭПОПЕЯ

(К 100-летию вооруженного восстания 1862 г.)

В. Г. МЕЛИКСЕТЯН

(Резюме)

Население провинции Зейтун до 1860-х гг. фактически обладало полунезависимостью. С целью полного подчинения Зейтуна своей власти турецкое правительство в 1860 г. организовало поход войск Хуршуд-паши, однако благодаря героическому отпору зейтунцев его войска потерпели поражение. Через два года, в августе 1862 г., султан предпринял новый поход на Зейтун, но и на этот раз против турецких поработителей поднялось все население провинции. Наступающим войскам был дан решительный отпор, но в связи с подходом все новых вражеских подкреплений для повстанцев создались тяжелые условия. Начались переговоры, в результате их был заключен договор, по которому зейтунцы соглашались подчиниться центральным властям, а правительство обязывалось вывести войска из пределов Зейтуна.

Зейтунское восстание вызвало широкий отклик как в Западной, так и в Восточной Армении. Особенно горячую поддержку оно нашло среди передовой армянской демократической интеллигенции того времени.

Героическое зейтунское восстание 1862 г. является одной из блестящих страниц национально-освободительной борьбы армянского народа против иноземных захватчиков и поработителей.

---

9 «Փարա», 1879, № 11, էջ 24։